ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 338.2 Նոտարին սուտ տեղեկություններ հաղորդելը

1.Նոտարին ակնհայտ սուտ տեղեկություններ հաղորդելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկու տարի ժամկետով:

2.Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր հաղորդած տեղեկության ճշմարտացի չլինելը որևէ նշանակություն չէր կարող ունենալ դատարանում կամ պետական այլ մարմիններում:

(338.2-րդ հոդվածը լրաց. 24.10.19 ՀՕ-190-Ն)